

ների տպագրութեան համար 8 ր. և այլն: Այդ-
քան թանկ լինելով բեմի վարձը, և վերջումս էլ
մի շօշափելի օգուտ չը տեսնելով, թատրոնական
ներկայացում չէ լինում և ժողովուրդն էլ մոռա-
նում է թատրոնը:

Իրաւ դարմանալի է. տեսնում էք 10—15 հոգի
մի ամբողջ շաբաթական տանջվում են, դերեր են արտա-
գրում և սովորում: Գրողն այս և այն կողմ են
վազում կրկնութիւններ անելու համար, որպէս զի
մի փոքր օգնած լինեն բարեգործութեան, իսկ
մի դատարկ բեմ, առանց լուսաւորութեան, ա-
ռանց ամբողջութիւն, մի օր և է 4—5, ժամի հա-
հար ստանում է քառասուն րուբլի, կամ թատ-
րոնական արդիւնքի 50%:

Աւելորդ չէ ասել, որ թատրոնական բեմը
պատկանում է Գայանեան օր. դպրոցին: Վատ
չէ, ի հարկէ, որ նրա վարչութիւնը աշխատում
է, որ այդ դպրոցի եկամուտը շատ լինի, վեր-
ցնում է ամեն մի ներկայացման համար 40 ր.,
բայց բանը նրանումն է, որ այդ դպրոցը դրանով
ֆինանսում է, փոխանակ օգտվելու. ահա թէ ին-
չու.—40 րուբլի վարձով շատ խմբեր չեն վստա-
հանում ներկայացումներ տալ, վախենալով թէ
գոթեց ծախսը չը կարողանան ծածկել, իսկ եթէ
նա արժենայ 20 րուբլի, այն ժամանակ ամեն
մի խումբ կը տայ ներկայացում և այսպիսով
շատ անգամ տրվելով աւելի օգուտ կունենայ,
քան երբ մէկ կամ երկու անգամ տրվի, 40 ր.
վարձով: Դա, կարծում ենք, երևաւորին էլ
հասկանալի պարզ հայել է:

Այստեղ մեզ թող թալ տրվի յիշել մի բան.
Երեսնում կայ մի վաճառական, որը ամեն տա-
րի իր չը ծախսող ապրանքի վրա տոկոս է գա-
լիս, այնպէս որ 5 ր. արժող ապրանքը երեք
տարի չը ծախվելուց յետոյ արժէ 7 ր., չը նայե-
լով որ ուրիշ տեղ նա ծախվում է 3 րուբլով:
Այդ վաճառականը ոչ մի կօպէկ կորուստ չու-
նի, տարուց տարի նրա դրամագումարը տոկոսի
բարձրելով, աւելանում է և այնպէս, չը նայելով
որ նա ոչինչ չէ անում, նրա առեւտուրը ընկած
է, բայց նա միշտ վստահ կունի:

Չը լինի թէ այդ առեւտրական մաղալու լողի-
կային է հետևում և Գայանեան դպրոցը, և 40
րուբլի հաշուով բեմի վարձը իր նախահաշուով
այդ աղբիւրից եկամուտ հարկերն է հաշուում
տարեկան, այն ինչ հազիւ մէկ կամ երկու ներ-
կայացում է լինում:

Մենք բոլորովին հեռու լինելով այդ դպրոցին
մի կօպէկ անգամ ֆինաս հասցնելու մտքից, այլ
ընդհակառակն, ցանկանալով որ նա թէ աւելի
եկամուտ ունենայ, թէ ժողովուրդը օգտված լինի
թատրոնի կրթող ազդեցութիւնից, և թէ թատրո-
նական գործը առաջ գնայ, կառավարիչները կամ
իջեցնել բեմի վարձը մինչև 20 րուբլի, կամ
վերցնել 30 ր. և տալ ամբողջութեամբ լուսաւորու-
թիւն և կամ վերցնել զուտ արդիւնքից մի օրոշ
տոկոս, դիցուք 20%: Եւ այս բանը ցանկալի է
որ շուտով լինէր, քանի որ դեռ ձմեռն է և կա-

աշխատանքը կին էր, նա եօթը տուն էլ ուրիշ
կը պահէր, և հէնց պահում էլ էր Մարկոսի
տունն ու իրանցը կառավարելուց յետոյ, նա ու-
րիշներին էլ էր օգնութեան հասնում: Մէկը նոր
ծննդկան էր լինում, հասած աղջկի, տաղարակին
կամ ակնուր չէր ունենում, որ տան հոգը քա-
շեն, և ուրիշ այս տեսակ դէպքերում, Գիւլնազ
աքերն իսկոյն հասնում էր օգնութեան: Նրա նը-
պատակն ուրեմն բուն իսկ Մարկոսի ամուսնա-
նայն էր, որ նա կնոջ ու զաւակի տէր դառնայ,
հօրական, պապական օջաղը վառ պահէ, չը
հանգցնէ:

Բայց տեսաւ որ Մարկոսը ցանկութիւն չունի
ամուսնանալու, ուղեց մի հնարքով ջերմացնել
նրա պաղ սիրտը: Իր այս նպատակին հասնելու
համար ուղեց մէկ միջի սարքը, այսինքն դիւղի
բոլոր աղջկերանցը հաւաքել Մարկոսին տունը
բոլոր գոգելու համար: Ինչպէս կարելի է,—առանց
ինքն իրան,—որ Մարկոսը այնքան աղջկերանցից
մէկնումէկին չը հաւանի, չը սիրի: Սրա համար
մէկ օր ասաց Մարկոսին.

—Քեզ համար չալ ու շաւար պէտք է գործել
տամ, հարսնեւորութիւն էլ դետապործ չուրացու-
նալու ուղեւ իմ միջի սարքեմ. աղջկերը հաւա-
քեմ, որ զան բուրդը գոգնէ:

—Այդ քո բանն է,—ասաց Մարկոսը,—դու ես
իմանում, ինչպէս գիտես, այնպէս արա:

—Մենակ իմ բանը չէ, քո բանն էլ է: Դու
պէտք է տանը կնոստ, բուրդ կրել է, դէս է,
դէս է, պէտք է մի քանի հաւ մորթես, փայտ

րել է մի քանի ներկայացումներ տալ: Բարե-
գործական ընկերութեան Երեսնի ճիւղի վարչու-
թիւնը այժմ իսկ ուրախութեամբ կրկին կը ներ-
կայացնէ «Պէպոն», որը ինքն հասարակութիւնը
խնդրում է, եթէ միայն բեմի վարձը էժան լինի.
հակառակ դէպքում այդպիսի ներկայացումներ
չառ դժուարութեամբ զուգն կը դան, քանի որ
դրամական կողմից հետեւեք շատ անշնան է
լինում:

Այստեղի թեմական դպրոցի ուսուցչական
խումբը պատրաստվում է ներկայացնել յօդուտ
նոյն դպրոցի չքաւոր աշակերտների (Թուղթ
խաղացողի կեսերը):

Ս. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» բաժանորդագրութիւնը շարունակ-
վում է: Ինչպէս միշտ, ընդունում ենք բաժանոր-
դագրութիւն 1 տարով (10 րուբլի), 11 և 10
ամսով (9 րուբլի), 9 և 8 ամսով (8 րուբլի), 7
ամսով (7 րուբլի), 6 ամսով (6 րուբլի), 5 ամ-
սով (5 րուբլի), 4 ամսով (4 րուբլի), 3 ամսով
(3 րուբլի), 2 ամսով (2 րուբլի) և վերջապէս 1
ամսով (1 րուբլի):

ԿՈՒՍԱՊԱՏԻՑ մեզ գրում են: «Չիմանալիք գա-
ւառում սաստիկ տարածված են այժմ «ժողովրդ»
և «Բնագաւառ», որոնք բաղմամբիւ զոհեր են տա-
նում երկրի մանուկ սերունդի շրջանից: Բժշկա-
կան ոչինչ օգնութիւն չը կայ, իսկ աղէտ ժողո-
վուրդը դիմում է սրբերին և զբոսանքներին: Այդ
վերջինները առնում են ժողովուրդի նրա վերջին
կօպէկը»:

Ինչպէս մեզ գրում են, Չիմանալիք գաւառում
սաստիկ ցրտեր է անում այժմ: Գիւղացիների
գրութիւնը, այդ ցրտերի պատճառով, շատ ծանր
է, առհասարակ:

Կ. ՊՈՍԻԿ մեզ գրում են հետեւեալը. «Ազգ.
Ժողովը գեկտեմբերի 16-ի նստքին մէջ չնորհակա-
լութեան քուէ տուած է Ունեան Մարկոս և
Աբել Էֆենդիներու (երկու եղբայր), որը իրենց
ծախքով վերստին կառուցին Խակիւտարի Ս.
Կարապետ եկեղեցին, որ անցեալ տարի այրեցաւ:
Այդ եկեղեցւոյ վերաշինութեան համար 40,000
րուբլի ծախսած են իրենց քսակէն»:

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են: «Այստեղ բնակարա-
նատէրերի և կալուածատէրերի կողմից հարս-
տահարութեան դէպքեր վերջին ժամանակներս
սկսել են աւելի յաճախ կրկնուիլ: Թէ ինչ է այդ
ցտաւել երևոյթի, պատճառը,—գիտուք է բա-
ցատրել, բայց իրողութիւնը մնում է անհեր-
քելի, որ այստեղի կալուածատէրերը և զանա-
զան «փողոտէրներ» այս կամ այն ճանապարհ-
ով շատ անխնայ կերպով են ծծում իրանց ձեռ-

կարտես, կրակ անես, ես ինչ գիտեմ, հիմա մի-
տըն չի գալիս, որ մէկ մէկ ասեմ, թէ ինչ պէտք
է անես:

—Շատ լաւ, ինչ որ կասես, ես էլ այն կա-
նեմ:

Միւս առաւօտեան վաղ վաղ եկան հաւաքե-
ցան մինչև տասը քսան նորահաս աղջկերը, մի մի
սանդղեք ձեռքներին, մինը քան զմիւրը թարմ,
առողջ, գեղեցիկ և առողջ: Նրանք ամենքն էլ
սրահումը կարգով նստածնային ծախապատիկ, և
սանդղեքներն առաջներին դրած՝ սկսեցին իրանց
գործը,—բուրդ գոգել: Հետը գոգում, հետն էլ ա-
սում, խօսում, խնդում, ծիծաղում էին, զանազան
սրախօսութիւններ անելով: Մէջները գլուխ կա-
պած՝ երեսները ծածկած նորահարսներ էլ կային:
Նրանց վրայ աւելի էին ծիծաղում դեռ պապ և
համարձակ ազատ աղջկերը: Դրոնք դեռ բերա-
նաբաց և զլխաբաց էին, և միայն մի մի չիլի
աղլուխ ունեին գցած գլխներին: Սրանց՝ ասել
խօսելն ընդհատում էր իսկոյն, երբ մօտենորդն
անց էր կենում Մարկոսը. այդ ժամանակ ըսկ-
տում էին միայն քիթերի տակին, զլխները քաշ-
եցած՝ չնշջալ, փոխառ ջրիչալ: Մարկոսը նրան-
ցից աւելի էր ամաչում, և ոչ ոքի երեսի չէր մը-
տիկ տալիս: Գիւլնազ աքերը նկատում էր այս և
իր մէջումը շատ բարկանում Մարկոսի վրայ: Նա
տեսնում էր, որ իր բուրդ շանքը գուր պէտք է
անցնի, բայց դարձեալ չէր յուսահատում: Նա
տեղի անտեղի Մարկոսին կանչում էր, մի բանի
դնում, որ շուտ շուտ դուրս ու տուն անի և

ընն կնկած խեղճ մարդկանց,—և ահա վերջին ժա-
մանակներս այդ խեղճ մարդկանց տուած գո-
հերը սկսեցին աւելի շատանալ: Մեր քաղաքի հա-
սարակական բարոյականութեան մասին դադա-
փար կազմելու համար այդ կէտը առանձին նը-
շանակութիւն ունի...»

Մեզ գրում են Կ. Պոսից, որ բանտարկված
Պոլոս վարժապետ Նաթանեան այժմ յանձնված
է հայոց պատրիարքարանին՝ պատրիարքի խնդր-
քի համաձայն:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այս տարի շատ
խիստ ձմեռ է անում. սառնամանիքը հասնում է
երբեմն 25 աստիճանի: Անցեալ օր քաղաքիս մօ-
տերքում սառել էր մի պարսիկ խկ թախթը և
վարսի (վարդիներ ուստատաղի) վանքի պահա-
պան քերդը իր ընկերակցի հետ մօտակայ գիւղը
գնալիս անպատասցէ են լեռնից պոկված ձիւնի
հահգին հիւսի տակ»:

«Новости» լրագրի մէջ կարդում ենք հետեւեա-
լը. «Սոխումի եպիսկոպոսը տեղեկացրել է Սի-
նոդին, որ մեծ թիւով մահմետական-աբխազներ
ընդունել են ուղղափառութիւն»:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Յանկարծամահ լինե-
լու դէպքեր այստեղ էլ պատահեցան: Անցեալ-
ները մի հայ օֆիցեր Մ. Վ. անունով, զօրախա-
ղից վերադառնալիս՝ դիւանատան դռանը ընկ-
նում և մեռնում է: Բացի դրանից, նորերս մի պա-
րոն, իր աղջական մի կնոջ զաւաթի վրա ողբա-
լիս՝ նոյնպէս վայրկեանբար մեռաւ»:

Յունուարի 6-ին, Թիֆլիսում, ըստ սովորութեան,
կատարվեց քրիստոնեայ աշխարհի ամենամեծ
տօներից մէկը.—այն է Գրիգորի մկրտութեան,
կամ ուրիշ խօսքով ջրօրհնէքի տօնը: Հայերը խա-
չը ջուր գցեցին վանքի մայր եկեղեցւոյ մօտ,
իսկ ուղղափառները Միքայէլեան կամուրջից
վերես Այս տարի հայերը խաչը ջուր գցեցին
ոչ սովորական տեղում, որովհետեւ ժամանա-
կաւորապէս շինվող կամուրջը կտորվել էր, և նա-
հանգապետ յայտնել էր, որ անկարելի է Միքա-
յէլեան կամուրջով անցնել, աչքի առաջ ունենա-
լով որ այդտեղ շատ մեծ իրարանցում կը լի-
նի, քանի որ այդտեղով են անցնում ուսանողներ և
վրացիները: Խաչը ջուր գցելու հանդիսին ներկայ
էր հազարի բաղմութիւն:

Կարսում, ներկայ 1889 թ.ի համար, դեպու-
տատներ ընտրվեցան՝ պ. պ. Ա. Սաֆարեանց և Գ.
Մկրտումեանց:

Գեկտեմբերի 26-ին հայոց բարեգործական ըն-
կերութեան կայացած պարահանդէսից դոյացած
ընդհանուր արդիւնքը, ինչպէս լուսւ է ենք, 1050

և սկսի փոքր ինչ ընտանեանալ:

Մէկ ասում էր՝ եկ կրակի տակն արա, մի
քանի փայտ բեր՝ կրակին դիր, մէկ ասում էր՝
փարչը տար կփղըջ ջուր ածա, մէկ թէ՛ ես պա-
րապ չեմ, արի այս բուրդը տար այն աղջկան
տուր, այս էլ տար այն հարսի առաջին դիր...
Սրա վրայ փրկվացնում էին բոլոր սատանայ աղ-
ջկերքը և իրանց խորին լուսութիւնն ընդհատում
բարձրաձայն ծիծաղով:

Մարկոսը կատարում էր մօրաբորջ հրամաննե-
րը, և չէր իմանում, թէ ինչի վրայ են ծիծաղում
աղջկերքը: Այսպէսով քիչ քիչ բացեցաւ Մարկոսի
երեսը և մինչև անգամ ինքն էլ սկսեց նրանց
հետ խնդալ և նայել սրա նրա երեսին թէ ուղ-
ղակի և թէ աչքի տակովը:

Եւ մէկը ամենից շատ դիր եկաւ Մարկոսին...
3.

Գիւլնազ աքերը շարունակեց իր սանդղեք-
ները, մինչև Մարկոսին երթարկից մի ուսմանա-
կան արկածը՝ հոկտեմբերական պատկերով:
Երբ որ աղջկերքը առաւօտեան ճաշն արին և
այս ու այն կողմ քաւեցան փոքր ինչ հանգստա-
նալու և օղախոխելու, Գիւլնազ աքեր՝ մօտ մը-
նաց մի սերունդի աղջիկ միայն, և հէնց նա ին-
քը, որ ամենից շատ էր դիր եկել Մարկոսին:
Գիւլնազը, կարծես գիտութեամբ, նայեց Մար-
կոսի վրայ, և մի առանձին գիծաւորութեամբ
բացականչեց.

—Գոռանամ ու կուրանամ ես... երկիրն ես-
խի կօծակը կտրուել է, աչքս էլ չի տեսնում, որ

բուրլի էր, իսկ ծախսը դուրս եկած՝ զուտ ար-
դիւնք մնաց 900 րուբլի:

Հրատարակեց «Մուրճ» քաղաքական, հասա-
րակական, գրական ամսագրի առաջին համարը:
Ամսագրի խմբագիր-հրատարակիչն է պ. Աւետիք
Արամյանեանց: Տեղաբնիկ արտաքին տեսչը բա-
ւական վայելուչ է և տեսողութեամբ պարունակում է
196 էրես: «Մուրճը» տպվում է Բաթումի մէջ
տպարանում: Ահա տեսարակի բովանդակութիւնը.

1) «Մուրճ» որպէս հատարակական օրգան: Աւետիք
Արամյանեանցի յօդուածը, 2) Պեճը Պեճեանցի
վէպը «Ցեցեց» վերնագրով, 3) Գեորգ Բարխու-
դարեանցի մի չը վերջացրած պօէմա (կամ պօէմ
և ոչ թէ պօէմիս), 4) Տիգրան Փերումեանցի մի
պատկեր վասպուրականի կեանքից, 5) Լէօի մի
ճանապարհորդութիւն «Հինգ օր» վերնագրով, 6)
Նիկողայոս Փարամեանցի «Պ. Պեճեանց և նրա
վէպերը» վերնագրով յօդուածը, 7) Գեորգ Չմըշ-
կեանցի «Գ. Սուրբուկեանցի կենսագրութիւնը»,
8) Կարապետ Եսաբեանցի «Ալեքսանդր II կայ-
սրի վերանորոգութիւններ» վերնագրով կօմպիլա-
ցիան, 9) Կարա-Մուրզայի «Նրա ժամանակը» յօ-
դուածը, այնուհետեւ մի քանի բանաստեղծութիւն-
ներ, վերջապէս Գրախօսութիւն. (այսինքն մատե-
նագրութիւն), Ներքին տեսութիւն, Նամակ Ար-
տասաններից, Քաղաքական տեսութիւն և Պա-
տասխաններ:

Թիւրքիայի Զմիւռնիա քաղաքի երիտասարդնե-
րի մի խմբից, պ. Գրիգոր Դաւիթովի միջնորդու-
թեամբ, ստացանք հանգուցեալ Բաթիֆի գրութե-
անի տպագրութեան գործի օգտին 55 րուբլի:

Մեզ ուղարկված է տպագրելու հետեւեալը.
«Յունուարի 4-ին Թիֆլիսում տեղի ունեցաւ մի
երիտասարդ կնոջ, այն է տիկին Թամար
Ներսիսեանի (օրիորդ Թամար Աղամեանի) թա-
ղումը: Հանգուցեալի բազմաթիւ ճանաչողների
համար դա մի ցաւալի կորուստ էր, որովհետեւ
տիկին Թամարը յայտնի էր իբրեւ մի արտասո-
ւոր անձն մեր իգական սեռի մէջ՝ իր անձնա-
կան յատկութիւններով, իր զարգացմամբ, իր
իրէպեղելով ճիշդին Թամարը թիֆլիսեցի և երբեմն
հարուստ մի ընտանիքի զաւակ է: Նա իր բոլոր
ընական կրթութիւնը ստացաւ Գայանեան օրի-
որդաց դպրոցում, ապա մտաւ Թիֆլիսի իգական
գիմնազիւն, որտեղ իր դասընթացը աւարտելուց
յետոյ՝ գնաց Պետերբուրգ, և մտաւ իգական կուր-
սերը: Իր ուսումը աւարտելուց յետոյ՝ նա վերա-
դարձաւ Անդրկովկաս, և ամուսնանալով երիտա-
սարդ Դաւիթ Ներսիսեանի հետ՝ նա իրան նուի-
րեց եռամսհուն գործունէութեան զանազան շըր-
ջաններում: Վերջին մի քանի տարիների ընթաց-
քում հանգուցեալին բաղդը հաւածեց. նա վարժու-
հու պատշաճով մի քաղաքից միւս քաղաքն էր ան-
ցնում, իր և իր ամուսնու հիւանդութեան պատ-
ճառով: Անցեալ տարւոյ յունվարին Գրիգ դիւ-

մի ասեղս թելեմ, կապ տամ, մինչև կօծակ կըը-
կատես:

Եւ դառնալով դէպի սիրունիկ աղջկեմ՝ ա-
սաց.

—Նախընտրեմ քան, Նախընտրեմ, մի հէնց մուրա-
ղիդ հասնես, առ այս ասեղը թելիւր և մէկ կապ
տուր երկիրս ետինէն:

Նախընտրեմ իսկոյն առաւ պառակի ձեռից ա-
սեղն ու թելը, ասեղը թելեց, բռնեց Մարկոսի
ետինէն և սկսեց կապ տալ, այսինքն ետին ծա-
լը շապկիցը կարեւ:

Մարկոսը մնացել էր կանգնած կախարարածի
նման: Երբ որ աղջկեմը բռնեց ետինէն, Մարկոսը,
որ աւելի երկայն էր աղջկանից, հարկադրեցաւ
մէջը կապեցնել և զուրը թեքել դէպի աղջկեմ:
Նախընտրեմ փափակ ու ջրմ մասները իրական
Մարկոսի բայ պարանոցին: Մարկոսն զգաց մի
զմայլելի չփռման երկու չնչերն իրար խառնե-
ցան: Մարկոսն զգաց մի տեսակ ներքին ջրային
ցնցում, ինչպէս էլեքտրական թելին հարածից:
Նա արթնում էր ամբողջ մարմնով, և նոյն րո-
պէին հազում էր առատ առատ, որ կարծի թէ
իր ցնցումները հաղալուց են առաջ դալիս: Թեթեւ
վիճակի մէջ չընկաւ և Նախընտրեմ Նա մագնի-
սացաւ: Նրա ձեռքն ասեղի հետ սկսեց դողդո-
ղալ, ինչպէս մագնիսի սղաքը երկաթի առաջ:
Փոխադարձ ցնցումները սաստկացան: Նրանց
շրթները մի աներկով զօրութեան մղմամբ
մօտեցան միմեանց և երկուսն էլ թուլացան...
(Կը շարունակվի)

ղում մեռաւ Գաբրիէլ Ներսիսեան թորակաւոր, իսկ տիկին Թամարը վերադարձաւ Թիֆլիս՝ հիւանդացած ծանր թորակաւոր, և թորակաւոր էլ նա մեռաւ անցած զեկտեմբերի 31-ին։ Երկու վաղաթաւաւ ամուսիններէն մնացել է մի փոքրահասակ արու զաւակ միայն Հանգուցեայի թաղման ժամանակ նրան ճանաչողները արտայայտեցին իրանց վիշտն ու համակրանքը։ Վաղաթաւաւ կնոջ դագաղը վրա դրված էին հինգ պսակ երկուստարողներով, օրհորդներով, Բագուի բարեկամներով, նոյնպէս և վրացի և ռուս երիտասարդներով կողմից։ Խօջիվանքի գերեզմանատանը պ. Քերիատիօր Միքայէլեան մի ճառ կարդաց։

Ինչպէս հաղորդում են տեղական ռուս լրագիրները, երկաթուղիին կայ հիմնելու կողմէստու երկրաշափական դպրոց, որի մէջ կենդանւն ընթացական դպրոցները չորսուր կամ հինգերորդ դասարանից աւարտածները։

Չանազան կողմերից հաղորդած տեղեկութիւններէն երևում է, որ Պարսից Շահը վճռել է առաջիկայ դարձանք ճանապարհորդել զէպի Եւրոպա։ Մայրաքաղաքների լրագիրները ստացած տեղեկութիւններին նայելով, շահը կը գայ Թուրքի, Թուրքից կը գնայ Պետերբուրգ, այդտեղ էլ երկու շաբաթ մնալուց յետոյ՝ կողմորդի Բերլին, Փարիզ, Լոնդոն, որտեղից Աստորիա գնալով՝ Բալթիկի վրայով կանցնի Պոլս։ Թուրքաց մայրաքաղաքից Շահը կը վերադառնայ Պարսկաստան, ինչպէս լսվում է, Շահը Թիֆլիս կը գայ Բագուի վրայով։

Չորեքշաբթի, յունվարի 11-ին, ռուսաց դրամատիկական խումբը, յոգուտ բանկի թատրոնի կասայի պ. Ա. Միրիմանեանի, բանկի թատրոնում կը ներկայացնէ առաջին անգամ «Лизавета Никольевна» նոր դրաման, երեք գործողութեամբ և չորս պատկերով, հեղինակութիւն Մոդեստ Չայկովսկու։ Դրամայի վերջը նոյնպէս առաջին անգամ կը ներկայացվի ֆրանսերէնից թարգմանված «Լիզաբետ» մեծ յանցանք է՝ անուանով կոմէդիա-հանաքը, 1 գործողութեամբ «Лизавета Никольевна» նոր պիէսան, ասում են շատ տաղանդաւոր մի գրութեան է, և մայրաքաղաքների բեմերի վրա մեծ արժեքութեամբ է խաղացվել։ Յոյս կայ, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը այդ օրը կերթայ թատրոն՝ թէ այդ նոր պիէսան տեսնելու և թէ քաջաշերտու պ. Ա. Միրիմանեանից։

Անդրոթեան զարմանալի օրինակ են ցոյց տալիս մեր զանազան ընկերութիւնների վարչութիւնները, և այդ անդրոթեանը շատ անգամ հասնում է կամայականութեան. կամայականութիւն չէ ապա ինչ է որ «Տպագրական ընկերութեան» ղեկավարները սրանից ամիս ու կէս առաջ վճռել էին յունվարի 8-ին ժողով նշանակել, հայել տալ և ընտրութիւններ անել, բայց չը նայած վճռին, չը նայած և այն բանին, որ այդ մասին տեղական լրագիրները յայտարարեցին էլ, այնու ամենայնիւ ընկերութեան ղեկավարները ոչ թէ միայն յունվարի 8-ին ժողով չը նշանակեցին, այլ և, ինչպէս երևում է, չեն էլ մտածում այդ մասին։ Ինչ անուան տալ այդ տեսակ վարմունքին։

Յունվարի 6-ին, բանկի թատրոնում ռուսաց դրամատիկական խումբը առաջին անգամ ներկայացրեց «Հենա-Սիլ» անուանով դրամա-ֆէերիան։ Այդ պիէսան թարգմանված է ֆրանսերէնից, և թէ և բնականաւորապէս արժանաւորութիւններ չունի, բայց հետաքրքրել է Մի քանի տեսարանները գեղեցիկ են։ Առաջին ներկայացմանը թատրոնը լի էր։ Նոյն ֆէերիան կրկնվեց ամիս 6-ին, 7-ին և 8-ին, և այդ օրերն էլ թատրոնում բաւական հասարակութիւն կար ջնքը կարող նորից չը նկատել, որ բանկի թատրոնը, չը նայած նրա վարչութեան զանազան խտրումներին, այնու ամենայնիւ շատ ցուրտ է։ Մարդիկ տարված են լինում վերաբերվելով նստել։— Եւ վերջում այդ հանգամանքը, անկասկած, կարող է այնտեղ հասցնել, որ հասարակութիւնը միանգամայն կը դադարի յաճախել այդտեղի ներկայացումներին։

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԳԱՅՐԱԿԱՆ ԲԱՆԱԳԱՆՈՒԹԻՒՆԸ

Աֆրիկայի հարաւային կողմերում և Աւստրալիայի արեւմտեւ գերմանական գաղթական արշաւանքների անադոլոթիւնը, որը վերջին ամիսներում շատ սաստկացաւ, ծանր տպաւորութիւն է թողել ամբողջ Գերմանիայում։ Հասարակաց կարծիքը դժգոհ է կառավարութեան գաղթական քաղաքականութեան այդ ընթացքից, և այժմ այդ դժգոհութիւնը արդէն արտայայտւում է ոչ թէ միայն հասարակութեան զանազան շրջաններում, այլ նոյն իսկ ժողովրդի ներկայացուցիչների շրջաններում, և շատ շուտով դուրս էլ կը հարցը մեծ աղմուկ կը հանի ընդհանուր մէջ։ Այդ դժգոհութիւնները զիստաւարտելու իշխան Բիսմարկի դէմ են ուղղւած, որի գաղթական քաղաքականութեան անուան այժմ շատ կոտորած է ժողովրդի աչքում։

Թէ գերմանական ժողովուրդը և թէ նոյն իսկ ամբողջ Եւրոպան այժմ սպասում են, թէ իշխան Բիսմարկ ինչ բացատրութիւն կը տայ իր սրտգրամի համար, որի աշդուրեւեան մասին շատ մեծ յոյս ունենին Գերմանիայում, և որը այժմ բոլորովին հակառակ հետեւեցնելի է հասցրել։

Մենք ասում ենք, որ Գերմանիայի հետ ամբողջ Եւրոպան էլ սպասում է իշխան Բիսմարկի բացատրութիւններին այդ հարցի վերաբերութեամբ, որովհետեւ գաղթականութեան խնդիրը այժմ առաջնակարգ խնդիրներից մէկն է եւրոպական բոլոր մեծ պետութիւնների համար։

Իսկ որ իշխան Բիսմարկ այդ բացատրութիւնները պէտք է տայ ընդհանուր, այդ էլ անկասկածելի կարելի է համարել, որովհետեւ հակառակ դէպքում ոչ թէ նրա հեղինակութիւնը կորույ է կորույթ, այլ և նրա բոլոր նախագծերը կարող են անդորաւորել մնալ, քանի որ հենց այժմ գերմանական դրոշմը հեռու Աֆրիկայի և Աւստրալիայի արեւմտեւ գաղթված է ոչ թէ գաղթական-կոլոնիալական միասին աշդուցնելու գործով, այլ համարեա թէ պատերազմական արշաւանքով, անդադար ռաբակոծելով տեղացի ժողովրդի գիւղերը, և խտրութիւններին դիմելով, որոնց հետեւանքը այն է եղել, որ այդ հեռու երկրներում խորին ատելութիւն է առաջ եկել դէպի գերմանական անուան ընդհանրապէս։

Այդ ատելութիւնը ապագայում էլ մեծ արգելք կարող է լինել գերմանական գաղթական քաղաքականութեան համար, և այդ պատճառով իշխան Բիսմարկ ոչ թէ միայն պէտք է բացատրէ գերմանական ժողովրդի ներկայացուցիչներին գործի այժմեան բնաւորութիւնը, այլ և պէտք է համազօր, որ անհրաժեշտ է փոխել այժմեան գործողութեան ամբողջ սխառմը,—ապա թէ ոչ ապագան անելի անաշդո կարող է լինել։

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

— Խօսք կայ, որ իբր թէ Բուսինիան պահանջում է Բուլղարիայից, որ այդ վերջինը, Բերլինի դաշնագրի գործութեամբ, քանզի իր սահմանագիծի վրա եղած բոլոր բերդերը։

— Արեւելքի մէջ կարգում ենք, որ այս օրերս թիւրքաց ուսուցանութեան նախարար Գեամիլ-պէյ փոխադարձ այցելութիւն արեց Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որի հետ կէս ժամից աւելի տեսակցութիւն ունեցաւ։ Գեամիլ-պէյ չորսուրսուրեց խորէն Պատրիարքին նրա պաշտօնի ստանձնները և նրան կարողութիւն մաղթելուց յետոյ մեկնեցաւ պատրիարքարանից։

— Անգլիայի Մանչեսթըր քաղաքից մեզ գրում են հետեւեալը։ «Վսեմափայլ Լորդ-Մէլբորուի մահուան լուրը մեծ ցաւ պատճառեց տեղիս աղջկանց, և այս առթիւ երեկ առաւօտ, յունվարի 6-ին, յատկապէս հանդիսաւոր պատարագ և դիմի պատարագին հողեհանգստեան արթնքներ կար դադարեցան տեղւոյս ժառանգ մէջ, վասն հողեռոյն վսեմ, հանդուգնելոյն։ Այս առթիւ տեղւոյս հովիւ գերապատիւ Սուրբաւ վարդ. Պարոնեան դամբանական մը խօսեցաւ, մէջ բերելով վեռն. հանդուգնելոյն անդուգնական յատկութիւնները և աղբարութիւնը։»

— Կ. Պոլսից մեզ գրում են հետեւեալը։ «Տարբէն Պատրիարք և Աղբ. վարչութիւնը որոշած էին, որ Հմայակ եպիսկոպոս Գլմաքեան երթալի Բուսինիոյ իբր առաջնորդական տեղա-

պահ, սակայն եպիսկոպոսը չուղեց համակերպիլ այս որոշման, այլ ընդհակառակն ուզեց ուրիշ պաշտօնեակու երթալ, այն ատեն Պատրիարքը պաշտօնանկ ըլաւ Հմայակ եպիսկոպոսը Էնի-Գարուի բարոդութեան պաշտօնէն, այս անգամ Գարուի վրայ Հմայակ եպիսկոպոս հնազանդեցաւ Պատրիարքին և թէ օրէն կերթայ իր նոր պաշտօնատեղին։ Առաջին անգամ է, որ կը պատահի այսպիսի խտրութիւն մը և կերել թէ օրինակը լաւ տպաւորութիւն պիտի թողու։»

— Վիեննայից հեռագրում են, որ 1889 թվ. զինուորակոչ կը կատարվի զինուորական նոր օրինագծի համեմատ։

— Ունդարական ժողովրդական լուսաւորութեան միեմսարը, նորերս խօսելով Ենյու մէջ, այն միտքը յայտնեց, որ իւրաքանչիւր ռեւոլուցի պէտք է իմանայ գերմաներէն։

— Վերջին օրերում Ամերիկայում, Պենսիլվանիայում, տեղի ունեցած փոթորիկը ահագին վնասներ է տուել, թէ աներ քանդուկ և թէ մարդկանցից զոհեր տանելով։

— Միւնխեն գումարված է խաղաղութեան բարեկամների ժողով։ Ժողովին ներկայ են աւելւրեան 200 հոգի, իբրեւ ներկայացուցիչներ ֆրանսիական, սպանիական և իտալական զանազան ընկերութիւնների։

— Լոնդոնում սըր Բոքլըտ Մորիէր վերջին օրերում բաւական մեծ ժողովրդականութիւն է ստացել։ Կառավարութիւնը ցանկութիւն ունի տալու նրան մի բարձր շքանշան։

— Վերջին ընտրութիւնների առթիւով հանրապետական բոլոր կուսակցութիւնների մէջ, Փարիզում, համերաշխութիւն է նկատվում, և հանրապետականները այդ համերաշխութեամբ յոյս ունեն, որ կարող են աշդուցնել իրանց թեկնածուների գործը։

— Փարիզից հեռագրում են, որ Պանամայի ջրանցքի ընկերութեան գործերը աւելի լաւ ընթացք են ստացել, և յոյս կայ, որ ջրանցքի շինութեան գործը շուտով անարգել առաջ կը գնայ։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՈՒՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՄՍՍԿՎԱ, 4 յունվարի։ Թագաւոր Կայսրին նոր տարվայ առթիւով արած շնորհաւորութիւններին համար, Մոսկվայի գեներալ-հասնագապետը արժանացաւ ստանալու այսօր հետեւեալ Բարձրագոյն հրովարտակը։ «Իշխան Վլադիմիր Անդրէեւիչ, Մոսկվայի կողմից ձեր արած շնորհաւորութիւնը Մեզ արդէն առանձնապէս հաճելի էր այս նշանաւոր տարվայ վերջում, որը նշանաւոր դարձաւ Աստուածային ուղորածութեան արտայայտութեամբ։ Աստուծուն ցանկալի էր, որ Մեզ ուղարկեցիք վրանդի սարսափի և Մեր փրկութեան վերաբերելու ուրախութեան մէջ պարզվէին թէ Մեր և թէ ամբողջ աշխարհի առաջ անսահման սիրոյ և ժողովրդական անձնութեան այն զգացմունքները, որոնք կազմում են Ռուսաստանի ոյժը, ոգևորելով և Թագաւորին և ժողովրդին։ Ուր զնելով նոր տարվայ մէջ՝ վերանորոգված հաւատով դէպի Աստուածային փրկարար գործիւնը՝ թէ Մեզ և թէ սիրելի հայրենիքի վերաբերմամբ, աղաչում եմ Աստուածանից՝ որ նա Մեր վիճակը և Մեր գործերը ուղղէ ի վառաբանութիւն իւր և ի բարօրութիւն Ռուսաստանի։»

ՓԱՐԻԶ, 4 յունվարի։ Ֆրանսիական կառավարութիւնը հրամանագրեց Օբոկի (աֆրիկական գաղթականութեան, Հնդկական ուղիւստում) նահանգապետին, որ նա թոյլ չը տայ ոչ մի զինուորական խմբին ավելի վրա ոտք դնելու։ ԲԷՂԳՐՈՒ, 4 յունվարի։ Գերմանացի զինուորական ժամանակ, որը տեղի մի ժամից աւելի։ Ամեն բան ստիպում է երթալու, որ երկու շաբաթվայ ընթացքում գերմանացի զինուորական խմբի կազմելու նոր միջնորդութիւն միանգամայն արմատական ուղղութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 յունվարի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ մի առանձին յանձնարարութիւն, որը պէտք է քննի այն նախագիծը, որի նպատակն է միջոցներ որոնել գիւղատնտեսական և մանր օդիհանութեան գործը զարգացնելու համար։

ԿԱՆԿԱՌԱՅ, 5 յունվարի։ Հնդկական կառավար-

ութեան բանակցութիւնները Չինաստանի հետ՝ զարգացնելու թշնամական գործողութիւնները տրեթեյնների դէմ, ընդհատված են, և չինական լրագիր ներկայացուցիչը վերադառնում է Տիբէթ։ ՎԻԵՆՆԱ, 5 յունվարի։ Այն լուրը որ իբրեւ թէ Աւստրիան գրաւել է ամբողջ Նիւթրադարի շրջանը, պաշտօնապէս հերքվում է։ ԲԵՐԼԻՆ, 5 յունվարի։ Միւնխեն ֆրիդրիք արձակվում է պաշտօնից։ Կրա Բլաուստը հաւանական է, որ Գեֆֆէնի դորն է, որը դասի ենթարկվեցաւ ֆրիդրիք III յիշատակարանները հրատարակելու համար և դատարանի կողմից էլ արդարացաւ։

ՍՕՖԻԱ, 5 յունվարի։ Պրինց Ֆերդինանդ փոխել իր բնակարանի վրա եղած ազգային դրօշակը, միացնելով բոլորական Սալոմիէ կօրուրդեան նշանակը։ Ընդհանուր դժգոհութեան պատճառով, միջնորդական խորհուրդը առաջարկեց պրինցին վերցնել այդ դրօշակը։ Այդ միջնադէպը դեռ չէ վերջացել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 յունվարի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգ գնացող բուխարական լրագիր դեպիւնը, ի միջի այլոց, պէտք է խնդրի վերադարձնել Բուխարային Սալոմիէնովը, որի փոխարէն զիջանում է Ռուսաստանին բուխարական մեծ նահանգներից մէկը, որը սահմանակից է ռուսաց հողերին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ Չերնոգորիայի իշխանութիւնները երկէ հասան Պետերբուրգ։

ՄԷՐԿ, 7 յունվարի։ Այսօր գնացին դէպի Պետերբուրգ հանդուցեալ Պրոքիվալու ճանապարհորդակիցները։ Նրանց խօսքին նայելով, դարձան սկզբին էկսպեկտիւն՝ նոր կազմակերպութեամբ կողմորդի Տիբէթ։

ՓԱՐԻԶ, 7 յունվարի։ Երէկ, Օֆինիում տեղի ունեցած գործադուլի պատճառով, այնտեղ պատահեցին ծանր խառնակութիւններ, որոնց ժամանակ կրակ տրվեց մի գործարան։ Կարգը վերականգնեցնելու համար զօրք ուղարկվեց։

ՊՐԱԳԱ, 7 յունվարի։ Չինական սէյմը միաձայն ընդունեց այն առաջարկութիւնը, որը վերաբերում է չինական ձեռնարկներ հիմնելուն։ Չեկոսլոնով Ռիքէր մասնաւոր էր անում այն բանի վրա, որ չինական փոքրաթիւ ազգը չէ էլ մտածում իրան համեմատել գերմանական մեծ ազգի հետ, բայց կարող է դուրսիւն ունենալ նրա հետ միասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունվարի։ «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ առաջիկայ ամառը սպասում են Պետերբուրգում օգոստոսիաւ շատ հիւրերի, այն է Դանիայի և յունաց թագաւորական զոյգերին, Չերնոգորիայի իշխանին, Հեստին մեծ դքսին, իր աղջկի Ալիսայի հետ միասին և Պարսից Շահին։ Նոյն լրագիրը հաղորդում է, որ Վիկտորիա թագուհու ներկայացուցիչը՝ Մեծ Իշխան Պաւել Ալեքսանդրովիչ և յունաց պրինցուհու պատկաւորութեան ժամանակ լինելու է Ռուսի պրինցը։— Ներկայումս Պետերբուրգում գումարված բժշկիկների ժողովը՝ ձայնելով մեծամասնութեամբ վճռեց, որ յաջորդ ժողովը լինի 1890 թվին Մոսկվայում։

ՎԻԵՆՆԱ, 7 յունվարի։ Այստեղ եկաւ պրինց Ալեքսանդր Բատտենբերգ այն նպատակով, որ վերադարձնի կայսրին իր հօրը, Ալեքսանդր Հեստեանցուն, նուրիւրած աւստրիական շքանշանները։ Պրինցը ընդունվեց երկարատև ժամանակով։

Կայսրի կողմից և ճաշեց թագաժառանգի մօտ։ ՓԱՐԻԶ, 7 յունվարի։ Նիդի քաղաքում գործադուլ արած բանուրները կրակ տուեցին գործարանը։ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունվարի։ Կիսիտայից Թուրքիստանի գեներալ-հասնագապետները մէջ անմաք թէլի ներմուծելը դադարեցաւ։ Վճռված է հետմաղթ. դադարեցնել մասնաւոր յայտարարութիւնների տպագրելը «Русский Рыбпром» լրագրում և արգելել այդ լրագրի համարների հատով վաճառելը։ Բ. Կրան հաղորդագրութեան համեմատ Պաւլստայում հրէաների երեք ամսով մնալու սահմանափակելը կը գործադրվի միմիայն այն հրէաների վերաբերմամբ, որոնք խմբով են ուղևորվում դէպի Պաւլստայ։

ՄԷՐԿ, 8 յունվարի։ Անգլիականները անհամաձայնեցին չէ անցնում, ազգաբնակչութիւնը տարածափելի ներկութիւններ է կրում, անապատներում ընկած են այնքան ամբողջ սառած հօտեր, մթերքները ներմուծելը համարեա դադարած է, կիւղի-Արլատում շաքարի գինը 12 րուբլի է, նաւթի պուրը վաճառվում է 6 րուբլով։

